# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 29.12.2021 թ. կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/2 գնման պայմանագրի

ք. Երևան «15» «փետրվարի» 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Մուրադյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «Ա-Էն Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 29.12.2021 թ. կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1. Պայմանագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 870000 (ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.3 Պայմանագրի 3.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը»:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված են 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
| --- | --- |
| Երևանի քաղաքապետարան | «Ա-Էն Քոնսթրաքշն» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հասցե՝ ՀՀ, ք. Վեդի, Արցախի փ.տ19 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900012410032 | Հ/Հ 1570025500000100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 04228922 |
| Գ.Մուրադյան ____________ (ստորագրություն) Կ.Տ. | Ա. Պողոսյան ____________ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված թիվ 1
«29» «դեկտեմբերի» 2021 թ. կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/2 գնման պայմանագրի
« » «փետրվարի» 2022 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| | | | աշխատանքների | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/960 | Արաբկիր վարչական շրջանի հ.24 քանդված մանկապարտեզի տարածքի հետ նոր տիպային մասնաշենքի տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | --- | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 | 870000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012419032
ՀՎՀՀ 02593108

Գ.Մուրադյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Ա-Էն Քոնսթրաքշն» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Վեդի, Արցախի փ.տ19
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570025500000100
ՀՎՀՀ՝ 04228922

Ա. Պողոսյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.